Ճաշիկ

Նպատակ

Հաղթահարել երեխաների թերսնուցումն ու դրա հետևանքները՝ նպաստելով առողջ սերնդի ձևավորմանը Հայաստանում:

Գործողություններ

Արագածոտնի մարզի չորս մանկապարտեզների (Ծաղկահովիտ, Նորաշեն, Գեղաձոր, Հնաբերդ) ֆինանսավորման միջոցով ապահովել դրանց 143 սաների մեկ տարվա առողջ, բալանսավորված և անհրաժեշտ կալորիականությամբ սնունդը:

Ծրագրի նկարագրություն

«Հայ օգնության ֆոնդը» (ՀՕՖ) 2018 թվականին Արագածոտնի մարզում սկսել է **«Փոխակերպելով երեխաների առողջությունն ու զարգացումը»** ծրագիրը: Երեխաների սննդակարգի բարելավումն ուղղված է թերսնուցման և թերաճության հաղթահարմանը:

Նախադպրոցական տարիքի երեխաների թերսնուցումը լուրջ խնդիր է՝ կյանքի ընթացքում ուղեկցվող լուրջ հետևանքներով: Այն կարող է հանգեցնել ֆիզիկական և մտավոր զարգացման հապաղման, կանանց պարագայում՝ ցածր քաշով երեխաներ ծննդաբերելու խնդիրների:

Այս ամենից խուսափելու համար կարևոր է առողջ, բալանսավորված և անհրաժեշտ կալորիականությամբ սննդով ապահովել երեխաներին հատկապես մինչև 5 տարեկան դառնալը: Հենց այդ տարիքի երեխաներն են համարվում այն խոցելի խումբը, որը հեշտությամբ կարող է ձեռք բերել թերսնման հետևանք հադիսացող հիվանդությունները, որոնք հետագայում գրեթե ենթակա չեն բուժման:

«Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության» 2015-16 **թվականների արդյունքներով՝ Արագածոտնի մարզի 5 տարեկանից ցածր երեխաների 29 տոկոսն** ունի տարիքին համապատասխան միջինից ցածր հասակ, **18.7 տոկոսը՝** միջինից ցածր քաշ (աղբյուր, էջ 153):

Իրազեկման և կրթության պակասը ևս նպաստում է թերսնուցմանը: «Զարգացումը երեխաների սննդի բարեփոխման և առողջ սերնդի ձևավորման միջոցով» ծրագրի մեկնարկից ի վեր «ՀՕՖ»-ը առողջ և բալանսավորված սնունդ ապահովելուն զուգահեռ նաև ծնողների և մանկավարժների համար տեղեկատվական դասընթացներ և սեմինարներ է կազմակերպում:

«Այո»-ն ևս որոշեց միանալ «ՀՕՖ»-ի այս կարևոր առաքելությանը՝ ձգտելով անհրաժեշտ ֆինանսավորման միջոցով հաղթահարել թերսնուցումը և դրա հետևանք հանդիսացող մի շարք առողջական խնդիրներ նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում: «Այո»-ն պատրաստ է կենտրոնացնել իր ողջ ներուժը, որպեսզի ունենանք առողջ սերունդ և կայուն ապագա, ինչին այդքան ջանասիրաբար ձգտում ենք բոլորս:

Բյուջե

ԻՆՉ	ՄԻԱՎՈՐ	ՔԱՆԱԿ	Մ.ԱՐԺԵՔ ՀՀ ԴՐԱՄ	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՀ ԴՐԱՄ
Առողջ սնունդ	հատ	143 երեխա	47 000 մեկ տարվա համար	6 721 000

Փոխարժեքը 2019-ի նոյեմբերի 19-ի դրությամբ՝
1 ԱՄՆ դոլար = 470

ԸՆԴՀԱՆՈՒՐ **֏6 721 000**